ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԽՈՒՃԱՊԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿ Է

Օգոստոսի սկիզբը նշանատրուեց Հադրութի շրջանի հարաւ-արեւմտեան գօտու հայաթափուած եւ ազերիներով բնակեցուած գիւղերի վրայ բազմաթիւ յարձակումներով:

Ինչպէս յայտնի դարձաւ, Օգոստոսի 3ի վաղ առաւօտեան երկարատեւ գնդակոծութեան ենթարկուեց Դոլանլար գիւղը: Խուճապի մատնուած ազերիներն ըսկսել են դուրս գալ գիւղից:

Մի ականի պայթիւնից սպանուել են երկու ազերիներ եւ մէկը ծանր վիրատրուել: Մէկ ուրիշ ազերի փախուստի ժամանակ գլորուել է ձորը եւ մահացել:

Նշենք, որ մի օր առաջ Ծամձոր գիւղում սպանուեցին երկու ազերիներ եւ գնդակոծուեց Սարիշէնում տեղակայուած ՕՄՕՆականների պահակակէտը:

Հադրութի շրջանի հարաւ-արեւմտեան գօտում ազերիների խուճապային փախուստը կանխելու նպատակով, հարեւան Ջեբրայիլի շրջանում նկատւում է հարիւրատր ՕՄՕՆականների կուտակում: Զինուորական պարետատունը առայժմ չի տեղադրում զինուորական պահակակէտեր ամայացած գիւղերում, դրանով իսկ խոչընդոտելով տեղահանուած հայերի վերադարձը: